




Ի Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Վ Ա Ք Ա Վ Ա Վ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԹԻ Ի Ի ՇԱՐՔԻՐ

Պ Ա Յ Մ Ա Ն Ք		Հ Ա Ս Ց Է	
ՊՈՒԼԱՐԻԱ		R diction u Journal	
Տարեկան	12 Ֆր.	«Iraounk»	
Վաճառական	6 Ֆր.	Bulgarie) VARNA	
ԱՐՏԱՍՏԱՆ		Редакция	
Երկու քիսք մեկ ծրարով		БА ВЪСТАКЪ	
Տարեկան	14 Ֆր.	«Ирасунок»	
Վաճառական	7 Ֆր.	IAPPA	
ԱՄԵՐԻԿԱ		Գրողները եւ չեն տրուիր	
Տարեկան	2.60 Տոլ.		
Վաճառական	1.50 Տոլ.		
ԿԱՆԻՏԻ			
ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ			
20 ՄԵԼԻ			

ՀԱՅՈՑ ԾՐԱԳԻՐԸ

Օրման. Սահմանադրութեան վերհռչակումէն ի վեր Կ. Պոլսոյ մէջ է՛ն նպատակաւորմար և է՛ն տրամաբանական գործ մը որ կատարուեցաւ մեր ազգային շրջանակին մէջ, այն ալ կազմութիւնն էր այն հայկական ծրագրին որ ուղեցոյցը պիտի ըլլայ մեր հայ երեսփոխաններուն Օսմանեան Խորհրդարանին մէջ:

Նախ հրաշխի էր կրօնական տարբեր գաւառներէն ու յարանուանութեանց վերաբերող հայ հատուածներու ներկայացուցիչները իմի համախմբուլ գաղափարը ու յղացումը Մարկով բաժնուած հայ ելքայրներու Ղալաթիոյ խորհրդարանին մէջ իրարու ձեռք սեղմելով, ընդհանուր հայ ցեղին վիճակը բարւոյն համար խորհրդակցութեան նստիլը ի ծագս աշխարհի տարածուած ամէն հայու բերկրանք պատճառեց:

Նոյնչափ եւ ա՛յլ աւելի բերկրաւիթ էր հայ յիշ. կուսակցութեանց ներկայացուցիչներուն և ալ յիշողային տան մէջ համախմբուլը, գծելու համար միակ համահայկական ծրագիր մը որ ընդհանուր տաճկահայոց բազմասնին ու պահանջներուն գոնէ միմիկումը կը կազմէ: Հայեացքնեւ, զորքեկակեպերով ու ծրագրիմներով իրարմէ անխառն, իրարու հակադիր, զիրար չէզոքացնող և մերթ զմերտ հարուածող սա յեղափոխական կուսակցութեանց վերջապէս ազգային կեդրոնական մարմնոյն մէջ համախմբուլը և անով համահայկական—գէթ Թուրքիոյ համար—ծրագրի մը մշակումը շատոնցէ ի վեր բաղձացուած, փնտռուած և միշտ անկարելիութեան մատնուած երազ մըն էր, որ իրականացաւ:

Այդ ծրագիրը հանդէպ Թուրք ազգին և բոլոր օսմանեան ցեղերուն կը բնորոշէ Սահմանադրական Թուրքիոյ մէջ Հայոց դիրքը, բաղձանքները ու հայեացքները: Օսման. Խորհրդարան

երթալիք մեր հայազգի երեսփոխանները անվարան, ճակատաբաց և հաստատ քայլերով պիտի կրնան ներկայանալ կայսերական կառավարութեան և պահանջել անվեհեր հերպսով այն ամէնը որ գծուած է այդ ծրագրին մէջ: Այժմէն կրնանք ապահով ըլլալ թէ բաղկացուցիչ բոլոր տարրերու երեսփոխաններու մեծագոյն մասը ուժ պիտի տայ ծրագրին, որ իրեն հիմ ունի ճշմարիտ հաւասարութիւնը և եղբայրութիւնը, իսկ իրեն նպատակ՝ բոլորի յառաջգիմութիւնը և երկրին զարգացումը:

Այդ ծրագիրը հայ երեսփոխաններու ձեռքին մէջ գտնուելով, Միկան մը կամ իդտում մը համարձակութիւնը չպիտի ունենան հայ ազգին անշտտական ձգտումներ վերագրելու: Մուրատ պէյի նման մէկը, եթէ այդ չըրբութիւնը ունենայ, գա իր այդ վարմունքով կապացուցանէ թէ հաւասարութեան աննկող, եղբայրութեան սկզբունքին դաւաճանող և երկրին յառաջգիմութիւնը չըմբռնող յետադիմական մըն է: Այսպիսիներուն դէմ անտարակոյս միացեալ ուժերով հայ երեսփոխաններուն հետ ուսուսի տուած պիտի կուրին բուն աղատական—յառաջդիմական թուրք և քրիստոնեայ երեսփոխանները:

Վերջապէս այդ ծրագիրը զբծելու առթիւ բոլոր հայ յարանուանութեանց եւ կուսակցութեանց համախմբուլը որչափ որ ալ ծագահարելի և ցանկալի երեւոյթ մը կըլտ ըլլայ իր արժէքը կը կորսնցնէ, եթէ անոր իրականացումին ամէն հայ համայնք, ամէն կուսակցութիւն և վերջապէս ամէն հայ անհատ իր շրջանակին մէջ չաշխատի:

Կը մաղթենք որ մեր կուսակցութիւնները իրենց ալ մասնակցութեամբ գծուած ու ընդունուած այդ ծրագրէն չեղելով արգելք չըլլան անոր իրականացմանը:

Պիտի տեսնենք զի, ենք:

Յ. Գորպիս

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ը.

1896 սոսկալի տարին զօխային տարի մը եղաւ: Օսմանեան ճշմարիտ... բարեկամ Յոյները թէ՛ Պոլս և թէ գաւառները կը ծաղրէին Հայերը և սրտանց գոհ էին որ թիւքքերը Հայերուն թշնամի ըլլալով պետական և առեւտրական ասպարէզներն իրենց առջեւ կը բացուէին, ողորմելի Հրեային ալ երես գտած էին... բարեխնամ կառավարութեան առջեւ:

Պոլսոյ լրագիրները Քլէյէ մը պատրաստել տուած էին—«պատկանեալ իշխանութեան հասած հեռագիրներուն նայելով Գոնիա, Ատանա, Մուսուլ, Հալէք, Մամուրէթ, Իլազղ, Բերուսա, Գասթալու, Վան եւ Էրզրումի նահանգներուն մէջ ապահովութիւնն ու հանդարտութիւնը կատարեալ է (էնի ու ասայիլ պէրքէ մալ տր):»

Այս քլէյէն կառավարութիւնը օտարած էր, եւ լրագիր ընթերցողներուն զազացել մասը կարող էր հասկնալ որ սոյն յիշուած նահանգներուն մէջ անոր որ անունը չէր յիշատակուած, կոտորածի կարգը անոր էր: Գրօրինակ վերելի յիշատակեալ նահանգներուն մէջ Սեբասթիոյ անունը չի կար, ըսել էր որ կոտորածը Սեբասթիոյ նահանգին մէջ էր, վաղն ալ կամ միւս յը վանի նահանգին անունը չիկար, եւ հետեւեալ օրն ալ Հալէպի նահանգին անունը չիկար, ուստի կը հետեւէր որ կոտորածը վանի կամ Սուրիոյ նահանգին մէջ էր:

Բարեխնամ... կառավարութիւնը մէկ քարով երկու թաշտն կը զարնէր, մէկով Սուրիոյ ցոյց տալ կուզէր որ երկիրը հանդարտած եւ ապահով վիճակի մէջ էր, միւսով ալ թուրք իւրժանին ասպարէզ կը կարգար կոտորած տեղի չունեցած երկիրները կոտորած սարքէլ և միշտ և հանապաղ երկու ազգերու մէջ թըշնամութիւնը վաւ պահել, ինչպէս որ յաջողեցաւ:

Այստեղ պէտք է լայն էլ մը բանալ ջերմ շնորհակալութեան եւ անմոռանալի երախտագիտութեան Պոլսիոյ որ զրկաբաց ընդունելու ազնուութիւնն ունեցաւ քսան հինգ հազար փխտալիան և գաղթական հայերն որք Պոլսոյ զօխքէն վախեր և ապաստանք էին վառնալ, Պոլսիոյ և Երիւզէ, ըստ առածին որ վշտացեալ պիտի վշտակրին վիճակը, իսկ Քրիստոնեայ եւ իբրեւ ազատած ժողովուրդ բնաւ ինչ որ կրնար ընել և մեծ իրաւունք ստացաւ բովանդակ

հայ ժողովոյ: Իսկ երախտագիտութեան վրայ, Մինչդեռ ընդհակառակը զրգուանք միայն ունի Ռուսանիոյ կառավարութեան համար, որ տմբապէս փակեց դուռները Հայուն զեմ: Այս ալ անոր բաժինը:

Բայց Պոլսոյ մէջ Հայոց տուններէն զատ Հայոց տուններն մօտերը ուրիշ տուններ ալ կային, ուրաւոր կեանքը կրակէ չապկ եղած էր և ուրուրեք արիւն և աւեր կը ծխային: Գաղտնի լրտեսներ և լուրբերներ մարախի նման սփռուած էին ամեն տեղ:

Բէշիկթաշի և Սարայ-Բուրնուի հովերը լիզո՛ւ: Երէկն եւ պատմէին թէ ինչ ձիւղան երիտասարդներ զինուորական վարժարանի ուսանողներ Մէքթէպլէնէր նորածն թիւքք երիտասարդներ և պատանիներ, վիզերուն մէկ մէկ թոք աւցած և ծայրը քար կապուած, գիշերները ծովերն ի վար կը նետուէին, աղաղակներ վայնաւ տուններ հեծեծեալքներ առ ոչինչ համարուելով ատեն հղաւ որ զգայուն մարդիկ իրենք իրենցմէ հրաժարեցան ձուկ ուտելէ, ձուկեր, որոնց անունը մարդկային մարմիններ էին, ձկնորսներ կը խոստովանէին թէ հաւաքով ըլլալ իրենց կերած հացը, քանի որ այս խեղճ երիտասարդներուն մերձամահ ազաղակներուն արձագանքին ներքեւ կը ճարէին զայն:

Արդեօք ո՛րքան տուններ կործանեցան ո՛րքան մայրեր սուգի ողոր և կոծի յանձնուեցան իրենց սիրելիներուն սոյն անգուման և յանկարծական կորստեամբ:

Ատեն հղաւ որ երկու նախարար իրիկուան ժամը 12էն յետոյ (Ը. Թ. չէին կարող միմիանց հետ տեսնուիլ, ատեն կըլլար որ հորսնիքի մը աղթիւ կայսերական իրատէ առնել... պէտք կըլլար երկու երեք փաշաներ ի մի վայր հաւաքելու համար, ուրաւոր նողկալի լրտեսներ կեղտոտ ճանճերու պէս կը վխտային, չեղած և չըլլալիքը Նուրզի փոխանցելու համար:

Մենք ի բոլոր սրտէ երկար կեանք պիտի մաղթենք Սուլթան Աբտուլ Համիտ Բ. Կազի (Սուլթանի նուաճման առթիւ) Թիւրքիոյ կայսեր համար, որ ապրէր և տապալէր իր օճազործութեանց եւ ուղեւ տապալին մէջ, այս նկատումով Արդիւ Համիտի կեանաց աղօթող չեղողը մեծագոյն յանցագործը պէտք է համարել:

Երիտասարդ թիւքքերու մէջ ալ կրակը ինկած էր, բայց միեւնոյն ատեն ինկած էին Միտհաթ բաշա, մեծագոյն նորագիշը որ թիւքքիա ունեցած ըլլայ, ինկած էին Խամայիլ Պէյ, Քէմալ Պէյ, Զիա բաշա և լ...:

Ձիւսի զոր չէր բաժնի իր մէկ կը-
րակոտ տաղերգութեան մէջ.—Շիւ-
տիքի ածիւղէրին տալարնը աչիւր էյ-
լէյէն, կէշմիլին բաժնի օգուր Ֆը-
րաունա Շէտտաթընա:

Այսինքն, «Հիմա՛նուան թշուառե-
րուն ով որ դատը կը լսէ. փարաւ-
նին եւ Շէտտաթին հոգւոյն ոգորմիս
կըսէ»—

Մենք ալ մեր կարգին Ֆաթիհա
(յաղթող) կը կարգաւ մեր հայրենա-
կից թիւրք եղբայրներուն իշատակին
համար, որք բռնաւորին ոճրագոր-
ծութեանց զոհ գնացին:

Այս կոտորածներուն եւ հալա-
ծութեան հետեւանքն այս եղաւ որ
Հայոցմէ տաւն եւ հինգ տարուան
միջոցին ուղղակի եւ անուղղակի կեր-
պով 300,000 մարդիկ փճացան 150000
հոգի Ռուսիա, Պուլկարիա, Պարս.
կաստան, Եգիպտոս, Երոպա եւ Ա-
մերիկայ գաղթեցին 40000 ոգորի եւ
բանտի յանձնուեցան. իսկ մեր թիւրք
եղբայրներէն 20000 հոգի կոտորուե-
ցան 10000 հոգի աքսորի եւ բանտի
մասնակցացն եւ 5000 հոգի զանազան
երկրներ փախան:

—Իսկ երկրին ամայութիւնն եւ աւե-
րածը մերկապարանոց եղան:

Հայերը զիւրին չէր կոտորել, բայց
Օսմ. կառավարութիւնը ամբողջ եւ
մարդկային քիւրտ ցեղը ձեռք ձեռքի
տուած էին այս Աստուածահանոյ ճի-
հաթը առաջ անցնելու համար եւ մա-
շաւանդ որ Հայուն ձեռքը զէնք չէին
թողուր եւ եթէ գտնուէր մեծ մեղք
էր, եւ արժանի դատաւարտութեան
եւ ուր արեւ գտնուածներն ալ իս
բելով խաբարելով առած էր կոտա-
վարութիւնը:

Ձէյթունը Հայուն զինուորական
պատիւը փրկելու հասաւ այն միջո-
ցին:

Իսկ երիտասարդ թուրքիս այն ա-
տեն որոշ կազմակերպութիւն չունե-
նալուն համար փախաւ Պոլսոյ ասպա-
րէզէն եւ Եգիպտոս ու Ռարիզ ասպա-
սանելով ջանաց զինքը կազմակերպել:

Իսկ Հայը եօթնգլխեան Հիդրաի
նման քանի ծեծ կուտէր, այնքան
ինքն իր մէջ կամրապնդուէր. սյն-
քան կը զօրանար, միայն կը ցաւինք
յայտնել որ—եւ այս ամեն իրկի
այսօրեակ կազմակերպութեանց մէջ
գտնուած է. թէպէտ անկայ պէտք
չէ թեթեւացուցիչ պարագայ մը նը-
կատել—զանուեցան հայրը մայրը ան-
յայտ սինըները ոմանք որ պարա-
զաներէն օգտուելով եկան կազմա-
կերպութեանց շարքերուն մէջ սպըր-
գիլ որպէս հայրենասէր, եւ զայն հ-
րենց վաճառ եւ ասպար ընտրեցին ի
րենց շահատակութեանց:

Մաղթելի է ի հարկէ որ այդ թըշ-
ուառականները չարքերէն զոհու-
ղո՛ւրս վաճառէին եւ նոյն իսկ լին-
չուէին, կազմակերպութեան զօրը
սուրբ եւ բարձր բռնելու համար:

Հրատուն

ՕՍՄԱՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՒԱՆԸ

ՀԱՅՈՑ ԾՐԱԳԻՐԸ

Իրաւունքի թիւ 70ով հրատա-
րակած էինք մինչեւ 9րդ յոգ-
ուածը այն ծրագրին, զոր խըմ-
բագրած է ընդունած էին մեր
Ալլա ժողովոյ Երեսփոխանները՝
մասնակցութեամբ հայ յեղ. կու-
րակցութեանց, հայ բողոքական

նաց եւ հայ պապականաց ներ-
կայացուցիչներուն: Այդ ծրա-
գրին մնացեալ մասն ալ այս ան-
գամ հոս կը հրատարակենք ի գի-
տութիւն մեր ընթերցողներուն:

9) Նահանգներուն արդի սոհման-
ներուն փոփոխութիւն Երեսփոխ. Ժո-
ղովի որոշումով, ըստ աշխարհագրա-
կան եւ տնտեսական պայմաններուն
գիւրութեանց:

10) Հանրային պաշտօնատններուն
մէջ յապաւում պիւրօրապիս ձեւա-
կերպութեանց (քալէմ ուսուլի), նը-
ուսղեցնել կարելի եղածին չափ պաշ-
տօնէից թիւը:

11) Գաւառի պաշտօն երանքը, մաս-
նաւորապէս դատական եւ ոստիկանա-
կան պաշտօնները, պետական իւ-
զուէն դործածելով հանգերձ, տեղական
լեզուներու ալ պէտք է ըստ կար-
տեղեակ ըլլաւ:

12) Վերջին 30 տարիներու մէջ յա-
փառակուած հողերու եւ կալուածնե-
րու ետ տրուիլն իրենց տէրերուն՝
յափառակութիւնը՝ ըլլալ յայտնի կամ
օրինական ձեւով: Չանագան ազգե-
րու սեփական հաստատութեանց յատ-
կացուած կալուածներու վերադար-
ձութիւն եւ այսուհետեւ պահպանումը:

Օսման. հայրենիքին պաշտպանութիւնը

13) Ցամաքային ու ծովային ոյսե-
րու կտտարելու գործում եւ բարեկար-
գում: Զինուորական ծառայութեան
նուազեցում, կայսերական պաշտօնէ-
ութեան պիտոյից համաձայն:

Ծաւաքային, զինուորական ծառա-
յութիւն երկու տարի:

Մովային զինուորական ծառայու-
թիւն երեք տարի:

Բանակի եւ նաւատորմի պէտքե-
րու հայթայթումին մէջ զեղծումները
խստիւ արգելել:

Պարզ զինուորներու ոսճիկի յաւե-
լում:

Համարիչ գունդերու իսկոյն ջըն-
լում:

Երեսմոս

14) Հարկային դրութեան որմատա-
կան բարեփոխութիւն, իրթիզամի ջըն-
լումը, տուրքերու թեթեւացում աստի-
ճանարար, ծառանգութեան վրայ
տուրք հաստատելով եւ ալ արդար
տուրքերով նոր հասոյթներ գտնել,
ջնջում անկանոն տուրքերու:

15) Ոնաւորութիւն ծախքերու Բար-
ձրագոյն պաշտօններուն ամսական-
ներուն նուազում, ստորագաս պաշ-
տօններուն ամսականներուն յաւե-
լում: Զննումն նեպոտականութեան
16) Զննումի եւ անմիջական ձե-
ռնումու թիւին վերջին քաղաքական
աղէտներէն լիաստեղ նահանգներուն:

Կրթութիւն եւ Լեզու

17) Նախակրթութիւն մայրենի լեզ-
ուով, պարտաւորիչ եւ ձրի, Չանաղան
ազգութեանց վարժարաններուն մէջ
պետական լեզուի խնամով ուսուցումը
պարտաւորիչ՝ նախակրթարանի (իրթ-
իսթի) երրորդ տարին:

Միջնակարգ (Լուստի) վարժարան-
ներու մէջ մէկ քանի դասաւանդու-
թիւններ՝ թուրքերէն լեզուով:

Հաստատում նաեւ խառն պետական
վարժարաններու, առանց վերը նշա-
նակուած սկզբունքները ջնջելու:

18) Պետութեան կրթական պիտոնէն
զանազան ազգերու կրթական ծախուց
համար համեմատական բաժինը տալ:

19) Պետական բարձրագոյն վարժա-
րաններու մուտքի զիւրացում: Ար-
տասանական ուղղակի ըստ կարի բազ-
մաթիւ ուսանողներ:

Տնտեսական Զարգացում

20) Անհատական սեփականութիւն-
ները յարգուելու պայմանով կարօտ
երկրադործներուն ձրի հողատու-
թիւն պետութեան կողմէ:

21) Ամեն կարգի աշխատաւորներու
եւ գործաւորներուն վիճակի բարեթը-
ման օրէնքներու հաստատում փութով
աշխատութեան եւ գործազույնների
կանոնաւորման համար յատուկ օրէնք-
ներ:

22) Պետութեան զիւրաւաւելի
պայմաններով մտնի վարկեր:

23) Հանրօգուտ ձեռնարկութեանց,
ճարտարարեւտի եւ անանուն ընկ-
երութեանց կազմութեան համար զիւ-
րութիւն եւ ձեւակերպութեանց կըր-
ճատում:

24) Հաղորդակցութեանց միջոց-
ներու շաղկապում:

Դատական

25) Դատական բարեփոխումներ
Օրէնքներու փոփոխում ժամանակին
յառաջադէմ օգուոյն եւ պահանջմանց
համեմատ: Ամէն կերպ տուրքերու եւ
ծախքերու թեթեւացումն եւ անոնց
վճարումը վճռին գործադրութեան
ժամանակ միայն եւ երրորդ գործադրու-
թիւնն հնարաւոր է: Պարտքի համար
բանտարկութեան ջնջում, հաշտարար
դատարաններու հաստատում, նաեւ
եղեւանական դատերու եւ մամուլի
դատերու համար «Ժուրի» ի դրու-
թեան հաստատում: Պատմական դատե-
րու մէջ վճռուած տուգանքներու բան-
տարկութեան վերածուիլը ջնջել:
Ոստիկանական բարեկարգութիւն:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍԺ. ԺՈՂՈՎ

Բ. ՆԻՍՏ

Ազգ. երեսփ. Ժողովոյ Բ. նիստը
տեղի ունեցաւ ուրբաթ օր Դալա-
թիոյ խորհրդարանին մէջ, ի ներկա-
յութեան 82 երեսփոխաններու:
Նախ մայր զիւրան ընտրութիւնը
կատարուելով, ըստից ստուար մե-
ծամասնութեամբ Ա. Ատենապետ ըն-
դունուեցաւ Տ. Մինաս Ձէյաղ. իսկ
Բ. Ատենապետ՝ Ըօթ. Թորգոմեան եւ
Գ. Ատենապետ՝ Տ. Գեորգ Աւանեսեան:
Նաեւ ընտրուեցան Ա. ատենադպիր
Տ. Հրանդ Ասատուր. Բ. ատենադպիր
Տ. Հայկ Սոճասարեան եւ Գ. Տ. Յով
հանէս Հինգիտեան:

Առաջին նիստին կաթողիկոսական
պատգամաւոր ընտրուող Գորանեան
հրաժարած էր իր առողջակ մե վճա-
կին պատճառաւ: Ուստի ըստ առաջ-
նոյն նստ ընտրութիւն կատարուելէ
առաջ Դաշնալիցական երեսփոխաններ
պնդեցին որ ընտրելի պատգամաւորին
վրայ որոշ պարտք դրուի թէ սրու-
տայ իր քուէն: Շատերը ընդդիմաօ-
սեցին եւ որոշուեցաւ պատգամաւորը
ազատ ձգել եւ միայն թելադրութիւն-
ներ ընել. բայց այսու հանդերձ երես-
փոխան Մարեան բացայայտ կերպով
յայտարարեց այսպէս.

«Կը զարմանամ թէ ինչո՞ւ կը վա-
րանիք ըսելու թէ անա մեր ընտրե-
լիները, ի վերջեան եւ Դուրեան
որբազանները, որոց պիտի տան մեր
պատգամաւորները իրենց քուէն (սու-
րեն ծախսարեւութիւններ) եւ եթէ մեր
պատգամաւորները տան իրենց քուէն
Օրմանեանին, հե՛ծուած առաջ կը
բերեն ազգին մէջ, եւ չպիտի ուղւի
յիշատայել անոր անունը, եթէ ելքէք
ընտրուի»:

Այս յայտարարութիւնը բոլորէն
հաւանութիւն գտնելով, ձեռնարկուե-
ցաւ պատգամաւոր ընտրութեան
գաղտնի քուէարկութեամբ, որուն մէջ
Տ. Ալէքսան Թօփալեան 39 քուէ եւ
Տ. Գեորգ Թորգոմեան 30 քուէ ստա-
ցան: Գուէից մեծամասնութիւն չը
չանելուն համար՝ համեմատականի
ընտրութեան ձեռնարկուելէ առաջ
Թորգոմեանին հրաժարումը ծանուց-
ուելով, Տ. Ալէքսան Թօփալեանը Կ.
Պոլսոյ պատգամաւոր հռչակուեցաւ:

Յետոյ անցնելով վարչ. խեան ընտ-
րութեան, եւ վիճաբանութիւն ծագե-
լով նախկին վարչութեան անդամոց
ընտրելիութեան մասին, որոշուեցաւ
ընտրելեաց հոսպատիկ ցանկին մէջ
անոնց անունները ջնջել, եւ 80 քուէ-
արկուեցան մասնակցութեամբ Կա-
տարուած ընտրութիւնը սա արդիւնք
տուաւ:

ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Բացարձակ առաւելութեամբ

	Գուէ
Տ. Մկրտիչ Ա. Եպ. Վեհապետեան	73
» Նմայեակ Եպ. Դիմաքսեան	69
» Դնէլ Վրդ. Դաշնաբարեան	70
» Յակոբոս » Շահպալեան	57
» Գեորգ » Աւանեսեան	59
» Վտհան Բն. Սոյան	62
» Տաճատ » Բաշաեան	68
» Արիստակէս քն. Զիլիճեան	51
» Արիստակէս » Հրաւրեան	46
» Յուսիկ քն. Քալուսի	44
» Տրգատ քն. Պոյաճեան	41

Համեմատականի մնացողներ

Տ. Մատթէոս Արք. Իզմիրեան	26
» Խորէն քն. Յարութեան	37
» Սուրբա » Պարգեան	30
» Արէլ » Երէցեան	22
» Եղիշէ վրդ. Զինկիրեան	21
» Վահան » Յակոբեան	21
» Վարդան Քահանայ	21

ԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Բացարձակ առաւելութեամբ

	Գուէ
Ստեփան Էթ. Գարանեան	68
Մկրտիչ » Մանուկեան	67
Եղեարդ » Գորակէօղեան	67
Սարատ » Բեաթիպեան	50
Յակոբ » Պոյաճեան	50
Տօթ. Ս. » Սեղբոսեան	45
Յակոբ » Գորանեան	52
Յովսէփ » Եւստուֆեան	44

Համեմատականի մնացողներ

Մինաս Էթ. Երրենեան	39
Յարութեան » Շահրիկեան	38
Գրիգոր » Զոհրապ	38
Վառդապետ » Մանուկեան	31
Զարմայր » Ծիմարտիս	27
Տօթ. Վ. » Թորգոմեան	26
Պետրոս » Հալաճեան	23
Տօթ. Ն. » Տալաւարեան	22
Ալիքսան » Թօփալեան	24
Յարութեան » Յովհաննէսեան	28
Համբարձում » Պոյաճեան	22
Բիւղանդ » Բէշեան	18

Գուէհամարի այս արդիւնքն հա-
ղորդուեցաւ ժամը կէսին, երբ քա-
կաւաթիւ երեսփոխանները միայն միա-
ցած էին, հետեւեալոր Տեղապար Սըր-
բազանը յայտնեց թէ յառաջիկայ ուր-
բաթ նիստ պիտի ըլլայ երկու համե-
մատական ընտրութիւններն ալ լրա-
ցնելու համար: Ուրբաթէն առաջ ալ
կարելի է կատարել համեմատականի
ընտրութիւնը, սակայն յառաջիկայ
չարթու Պայրամի պատճառաւ Բարձ-
րագոյն Դուր գոց ըլլալով չի կրնար
վաւերանալ նոր վարչութիւնը, որ-
պէս զի անմիջապէս նիստ ընելով
ձեռնարկէ կազմելու Պատրիարքական
հնգանուն ցանկը, որուն վրայէն պի-
տի կատարել Ազգ. Ժողովն իր վերջ-
նական ընտրութիւնը:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ն

Սիլիստրե, 7 հոկտ.

Առանձին կարգադրութեամբ քաղաքիս Պատ. Թաղականութեան՝ Սեպտ. 28 կիրակի յետ աւարտման Ս. պատարագի տեղւոյն երկսեռ հայ հասարակութեան մասնակցութիւնով գահաբանական աղօթք ու սրտագին մաղթանք կատարուեցաւ տեղւոյս Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ, ազատ Պաշտօնի շնորհապատիւ Ֆէրտինանտ Ա. Վեհափառ Թագաւորին, Թագուհիին, զահմառանգ իշխանին եւ համայն արքայական գերդաստանի բարօրութեան, եւ երջանկութեան համար:

Սրիխարէսքանակ հայ երախտագէտ ժողովուրդը Պաշտօնի ազնիւ եւ հիւրասէր ցեղին այսպիսի ուրախութիւն պարագայի մը զգացած ազգային ընդհանուր եւ սրտագին ուրախութեան անկեղծապէս մասնակցից ըլլալով ի դիմաց քաղաքիս հանուր հայութեան մեր հոգեւոր հովիւ, Արք. Տէր Սարգիս հայր Արքեպիսկոպոսի հետեւել հեռագիրը ուղղեց Նորին Վեհափառութեան:

Նորին Վեհափառութիւն
Ֆէրտինանտ Ա. Թագաւոր
Անկախ Պաշտօնի

«Սրիխարէի ամբողջ հայու»
«Թիւնը այսօրուան Ս. Պատար»
«Գին ներկայ գտնուելով, Ձեր»
«Վեհափառութեան, Միտման փառ»
«Էլեւոնորա Թագուհին, եւ Ձեր»
«Սիրտանուն զաւակաց երկար եր»
«Ջանքի եւ բարեբաւարի կենաց»
«Համար, սրտանունէր միտման»
«Քրով մասնակցեցաւ այն մաղթա»
«նաց, զոր մասնաւորաբար Ձեր»
«Վեհափառութեան Թագաւոր»
«Հոգեւորական առթիւ յերկիրն»
«ուղղեցինք, ուստի իմ եւ հօտիս»
«Սրտագին շնորհաւորութիւն»
«ներն այս առթիւ Ձեր»
«Պաշտօնի փառաւոր գահային»
«Ջանքի կը մատուցանեմք»:

Հետեւեալն է պատասխանը, զոր Նորին Արքեպիսկոպոս Վեհափառութեան կողմէ Ա. Թիկնապահ Տօգրովիչ ամսոյս Յին ուղղեց հաս:

«Նորին Վեհափառութիւնը՝ Ձարը»
«Կը պարտաւորեցնէ զիս յայտնել»
«Ձեզ իր գոհունակութիւնը Ձեր»
«ու ժողովրդեանը յայտնած ջեր»
«մագին շնորհաւորութեանց հա»
«մար»:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ո Յ Զ Ի Ն Ո Ր Ո Ւ Ժ Ը

Օսմանեան բանակի զինուորական ուժը այսպէս գնահատուած է:

Նիզամիէ 260,000, Ա. պահեստի (ինքիս) 120 000 Ա. (րէսիվ) 270,000, Բ. (րէսիվ) 360,000, Երկրորդական՝ 90,000, համագումար մէկ միլիոն հարիւր հազար հոգի:

Թուրքիա ունի եօթը զորաբանակ. Պաշտ. Էտերնէ, Սէլանիկ, Ե. զինակ, Դամասկոս, Պաղատա եւ Սանտա(նէ մէն). կան նաեւ երկու անկախ զորաբանակներ ինքնուրուիս եւ Մէքքէ:

Երկրորդական զորքի մէջ Ա. զորաբանակը ունի 28,000 զինուոր եւ 239 թնդանօթ, Բ. զորաբանակը 42,000 զինուոր եւ 330 թնդանօթ Դ. զորաբանակը 70,000 զինուոր եւ 431 թնդանօթ, Ասոնցմէ զատ կան

նաեւ ամրոցներու յստուկ 12 000 զօրք, որով համագումար կըլլայ Նւրուպայի մէջ 152,000 զինուոր եւ 990 թնդանօթ:

Ասիոյ մէջ Թուրքիոյ ոյժերն են. Դ. զորաբանակը ունի 35,000 զինուոր եւ 120 թնդանօթ, Ե. զորաբանակը 19,000 զինուոր եւ 50 թնդանօթ, Զ. զորաբանակը 19 000 զինուոր եւ 80 թնդանօթ, Դ. զորաբանակը 14 000 զինուոր եւ 20 թնդանօթ, Տրիպոլիոյ զորաբանակը ունի 25,000 զինուոր եւ 20 թնդանօթ, Հիւսիսային զորաբանակը 6600 զինուոր եւ 8 թնդանօթ:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Պագաւի մէջ դրամա շորթութեան զէպքեր կը պատահին յաճախակի ծաւալի է որ շորթութեան եւ զահեղէն շատեր հայեր են: Վերջին տեղամ հայ վաճ. աւան մը նաժար էր ստացեր, որով սպառնալիքի տակ դրամ կը պահանջուէր: Հետեւեալ օրը պահանջողներէ մէկ, Յովհաննէս անունով կը ներկայանայ վաճառականին Սա գալիք փոխորդին կանխաւ պատրաստուած ըլլալով, իրեն սպառնացող Յովհաննէսը կը սպաննէ:

Կատարուած քննութիւններէ կը հասկնուի թէ Յովհաննէսը 80 բուպի ամսականով վտանգականի պաշտօնեայ է եղ, երեք ամիս առաջ ամուսնացեր է եւ հայր մայր եւ քոյր ունի եղբոր զօրք ինք կապեցնէ:

— Բժիշկ Բաբեան մեռելով 60000 բուպի արժեքով թողած է որոնց տոկոսովը ըստ իւր կտակին, ազգաստղանքեր պիտի գտնուէր:

— Պագաւի մէջ նաւթահանքի տնօրէն Տ. Վաղարշակ Եղիազարեան իր կառքովը գացած ատենը յարձակուած կը կրէր երկու անձանօթ չափողովներէ, որոնք ատրճանակի 7 գնդակ կարձակեն ու կը վերադառնան զիւնն ու փորէն, եւ կը յաջողին փոխել ու ձեռք շանցնել: Արդէն Ռուսիոյ մէջ ճարտարները քիչ անգամ օձիքին ձեռք կուտան:

— Երուսաղէմի պատրիարքը կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար իր կողմէ նշանակած է Սուքիաս արքեպիսկոպոսը:

— Էջմիածնայ Սիւրբ անդամակցութեան համար չորս ամիս սառնաշաղկաւածներէն ուսու կառավարութիւնը հաստատել է Տէր Յուսէփ Ե. պիսկոպոսը (Առաջնորդ Երեւանի), Մեսրոպ վրդ. Մատթէւս վրդ. եւ Սահակ վարդապետ:

— Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութիւնը կը զբաղի Թրքան՝ գաղթականները երկիր լեւրագործելու գործով: նպաստներ եւ զիւրութիւններ կընձայն անոնց:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Կաթողիկոսական նորընտիր պատգամաւորը Տիար Թաւադեան Բիզանդիոնի խմբագիրներէ միտման յայտներ է թէ իր առաջին ընտրելին է Դուրեան Եպիսկոպոսը: Հետեւ համոզուած է որ ազգային ու քաղաքական արդի դժուարին պայմաններուն մէջ իգմիրեան Սրբազանի երկաթեայ կամքին պէտք կայ Թուրքիոյ Հայոց վարչական գործերը լա-

ւազոյն կերպով և ազգին բաղձանաց համեմատ վարելու:

Մենք ալ չուս ճիշդ կը գըտնենք Պաշտօնի պատգամաւորին այս նկատումը, թէ Սրբազան Իշխրութեան Թուրքիոյ Պատրիարքը պէտք է ըլլայ ու մնայ Սակայն բաղձալի էր գիտնալ թէ Դուրեան Սրբազանի հետ կաթողիկոսական իբր երկրորդ ընտրելի որու պիտի տրուի քուէ: Մի գուցէ երկրորդ ընտրելին անորոշութենէն Օրմանեանականները օգտուին:

— Երուսաղէմի Պատրիարքէն և Եղիշէ Մ. Վ. Զիլինկիրեանէն Պաշտօնի հաստատ հեռագիրներ վաճ. քին վիճակը շատ տաքնապալից ցոյց կուտան. հոն կարգ մը անձեր խնդիրներ կը յարուցանեն եւ վաճ. քը տակն ու վրայ ընել կուզեն եղբր:

— Կիլիկիոյ կաթողիկոսը չէ ուզած մասնակցել Սիւնայի Հայոց Հայրապետի ընտրութեան, որով հետեւ Կիլիկիոյ ութ վիճակներ ունենալով, իրաւունք ունի 8 եկեղեցական և 8 աշխարհական պատգամաւոր տալու: մինչդեռ հիմակ միայն մէկ վիճակ նկատուած է ամբողջ Կիլիկիան:

— Եւրոպայի և Ամերիկայի Հայ Թեմերուն ալ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու առաջարկը մերժուած է Ռուս նախարարութենէն:

— Աստուախանէն կաթողիկոսական պատգամաւոր ընտրուած է Տ. Կարապետ Արաճաւեան եւ Ելեւանէն՝ Տ. Վասիլ Եղիազարեան: Իսկ Կեսարիայէն Տ. Կառապետ Ճամբեան պատգամաւոր ընտրուած ըլլալով, Պաշտօնի հաստատ և մեկնած է Էջմիածին:

— Պաշտօնի Յունաց պատրիարքը Յոյն քիչ գտնուած վիճակներուն հրահանգներ զրկած է, յանձնարարելով որ իրենց քուէները Հայ ընտրելիներուն տան Օսման. Բարլամէնդի ընտրութեանց առթիւ, քանի որ Յոյները խիստ փոքրամասն ըլլալով չեն կրնար զատ երեսփոխան ընտրել: Յոյն պատրիարքին այս վարմունքը գնահատելի է:

— Անվերսէն Տ. Մատթէոս 50 ոսկի յանձնել է Պատրիարքարան պայմանաւ որ այս վերջինը ալ 100 ոսկի եւս բարձրով Ձէյթուն հասցնէ ի նպաստ կաթողիկոս:

— Պաշտօնի ոսկերիչներէն 5000 զրդ. հաւաքուած ու յանձնուած է Պատրիարքարան գաղթականներուն օգնելու համար:

— Խարբերդի մէջ Դաշնակցականներուն ետաքրութեանը զոհ գացեր է Հայոց ձայնը, այսինքն Օսմ. Բարլամէնի համար Դաշնակցականը Տ. Ռուբէն Զարգարեանը ընտրել ուզեր են, իսկ ոչ Դաշնակցականը ուրիշ ընտրելի մը ցոյց տալով բաժանում առաջ եկեր է, որով ընտտուել են

միայն երեք թուրք յետադիմականներ: Խարբերդի հայերը թիւով և գերքով շատ կարեւոր տեղ մը կը գրաւեն եւ կարող էին մէկէ աւելի ընտրելի յաջողցնել եթէ սա ետաքր կուսակցութիւնը չի յամաւէր իր մարդուն վրայ Սիւնի:

Վանէն հասած թղթակցութիւններ եւս հայերուն երկուքի բաժնուած ըլլալը ցոյց կուտան ընտրական պայքարին մէջ: Մենք որ կը սպասէինք Վանայ սանճագէն երկու հոյ պատգամաւոր ունենալ, այժմ մէկ հատն ալ կասկածելի է: Որչափ լաւ պիտի ընէին սա մեր կուսակցութիւնները եթէ իբրեւ կուսակցութիւն չի մասնակցէին ընտրութեանց, այլ իբր հայ անհատներ ազգային շրջանակի մէջ կամ առաջնորդարաններու շուրջ համախմբուելով, ազգովին խորհրդակցաբար նշանակուէին արժանաւորագոյն հայ ընտրելիները, ինչպէս որ ըրին Կ Պաշտօնի մէջ:

— Մալաթիայէն Պատրիարքարան ուղղուած հեռագրով մը Գիւրտեմուր վարդապետին համար վերջնական տնօրինութիւն մը խնդրուած է:

— Ազգ. հիւանդանոցի հացը որ կտրուած էր վերջերս տալ սկսած են պետական զինուորական քանէն:

— Կ. Պաշտօնի հայութիւններէն վերկազմուած Դպրոցաւոր Տիկնանց և ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնները գովելի գործունէութիւն մը ցոյց կուտան: Յարատեւութիւն և յաջողութիւն կը մաղթենք այդ երկու ընկերութիւններուն միանգամայն:

Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

Թիւրքիա Վ. Պաշտօնի

Կէչէն հաջորդաբար Սրբիտան Սթանպուլ կիտէն խորհրդի նէզարէթի պաշտօնակալ Մ. Տիմիթրովի բոթա վէ թէլէկրաֆ նաղըրը Մ. Սթանպուլի կէլէլէրի մուհարէպէ գորգուսը վերմիշ վէ պիր թագըմ կազմեթ մուխպիրէրի պու շալէայը պիւթիւն տիւնեայա տաղըթմը ըտը Թագաթ մէրգու մանըն պէյանաթընտան անլաշըլըրը իւրէ, օնլար գաթի պիր միւլէքէրէ իթմէք վազիֆէսի իլէ կիթմիշ օլմայուպ, եալընըրը Պապը Ալինին եէնի աշվալ իշլըն մագուէտ վէ թաւմիմի անլայուպտէ պիլախէրէ Սօֆիա վէ Սթանպուլ պէյնինտէ րէսմի միւլէքէրէ պաշլամագ ֆիքը ու նիյէթի իլէ կիթմիշլէր:

Օնլարըն Սատրապ վէ թէֆիգ բաշա իլէ կէօրիւլէլէրի շու գանաաթը հասըլ իթմիշքի Թիւրքիա պէօյիւլ տէլէթլէրին

